

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռ.
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեղուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻՒԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԲՍՂԱՔԱՆԱՆ ԼՐԱԳԻՐ

Այս հրատարակիլի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մեր ստանում ենք սեփական ՀԵՌԱԳՐԱՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսականը 6 ռուբլի:
Գրել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱԿԱՆԱՆԱՆԻ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների մակընթացում, Թաւաշիկի տանը):
Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվում համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЬ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:

Այս ՆԱՏԱԼԻԱ ՊԱԼԱՍՏԱՆԵԱՆ պատիւ ունի խնդրելու իր հանգուցեալ ամուսնու, ՍՏԵՓԱՆՈՍ ՊԱԼԱՍՏԱՆԵԱՆԻ սպգականներին, ծանօթներին և նրա նախկին աշակերտներին, շնորհ բերել շաբաթ, փետրվարի 17-ին, Վանքի մայր եկեղեցին, ուր պատարագից յետոյ կատարվելու է հանգուցեալի հոգեհանգիստը, նրա մահուան տարեդարձի առիթով:

2—2

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուսուցչական խնայողական արկղ. Բագուի հայ-բողոքականների հոգաբարձական ընտրութիւնները. Դիմիտրի Բագուի թաղումը. Նախկին Մեղրիից. Նախկին ՍՈՒԹԻՒՆ. Սպանիական գործերը. Ֆրանսիական հանրապետութիւնը և Օրէնսեան դուքսը. Արտաքին լուրեր. ՀՈՒՍՏՈՒՆՈՍ ՍՈՒՍՏՈՒՆՈՍ ՍՈՒՍՏՈՒՆՈՍ:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԽՆԱՑՈՂԱԿԱՆ ԱՐԿԼ

Մեր առաջին յօդուածում (տես «Մշակ» № 10) ասացինք, որ հայ ուսուցչի իր կոչման բարձրութեան վրա չէ կանգնած, չէ կատարում այն, ինչ որ ուրիշներին յորդորում է անել և սրա համար օրինակ բերելով խնայողական արկղ և փոխադարձ օգնութեան դրամադուր չունենալը: Այդ յօդուածից յետոյ մեր անդամները դիպան կարծիքներ թէ յօդուածը կատարեալ չէ, որովհետեւ խնայողական արկղի մասին ընդարձակ չէ գրված:

Մեր անցեալ յօդուածի նպատակն էր միմյանի մասնացոյց անել մեր պակասութիւնները վրա, որ ժամանակ է պահանջուող հայեացքները թողնելու, ժամանակ է սթափվելու ու գործելու... Այս անգամ կը խօսենք ուսուցչական խնայողական արկղի մասին:

Անցեալ տարի «Մշակը» առաջնորդող յօդուածով արժարեց յիշեալ հարցը, ձայնակցողներ եղան, պատրաստակաւութիւն յայտնողներ գտնուեցան, բայց մի քանի ժամանակից յետոյ, մեր բնաւորութեան համեմատ, մտաւայնը ամեն բանի հետ այն ժամանակը շատերն ասում էին. — Թող հիմա մենք կը մասնակցենք, բայց ոչ մէկը նախաձեռնող չեղաւ, իսկ արկղն ինքն իրան հիմնով չէր կարող:

Կային ուսուցիչներ էլ, որոնք ասում էին. «մենք մեր ուժով չենք կարողանում ապրել, ինչպէս խնայենք»:

Ուսուցչի իր ստացածը ծախսում է, այսպէս ասած, ծայրը ծայրին է հասնում, բայց կարող է մի ուսուցիչ ասել. «Առանց ակնորդ ծախսեր անելու իմ ուժով չէ բաւականանում ինձ»: Մենք տեսնում ենք, որ ուսուցչին ապրում է քանի որ պաշտօնի մէջ է. նա աղքատ է, երբ պաշտօն չունի:

Հայ ուսուցչի ստացածը շատ չնչին է, նրան

չեն հնաճառում արժանաւորութեան, չարչտրանքի չափով. իրաւացի է նրա զանգաւոր, բայց միթէ սա մեզ պիտի իրաւունք տայ մեր ապագայի մասին չը մտածել. ի հարկէ ոչ:

Միայն իր «խնայողութիւն» գրել մէջ երկար կանգնելով այս հարցի վրա, ասում է. «Հնամիայն կարող է իր ապագան ապահովել, ով ծախսում է ակնի թիչ քան ստանում է իր օրինակից»:

Մենք, ուսուցիչներս էլ պէտք է մեր ուժով մի մասը խնայենք և եթէ 10 տարի առաջ մտածէինք, այժմ ամեն մէկս մի պատկառելի դուռ կունենայինք:

Մենք մեր չը խնայող վիճակով մասնում ենք մեզ թշուառութեան. դառնում ենք կեղծաւոր, գերի այս կամ այն հոգաբարձութիւն, շողորդող ու մեր համոզմունքների հակառակ ամեն ինչ անող...:

Միայն ասում է. «ով ուղում է աղատ լինել, պէտք է ապահով լինի, իսկ որա համար հարկաւոր է խնայող լինել»:

Մինչև այժմ մենք ոչինչ չենք խնայել և հաւատացած ենք եղել, որ դուրս գալով այս կամ այն դպրոցից կարող ենք ընդհատ մնալ, ուստի ամեն տեսակ ապօրինի ու անխիղճ ճնշումների դիմաց ենք, տարել ենք մեր իշխանաւորների դէպի մեզ ուղղած վերաւորական խօսքերը, որ մեզ պատիւ չէ բերում: Գոնէ այսուհետեւ աղատ լինելու համար խնայող լինենք, թոյլ չը տանք այս կամ այն մարդուն, որը ամենաթիւթն է մասնակցութիւն ունի մեր գործերի մէջ, մեր պատիւը ոտնակոխ անելու ժամանակ է լրջութեամբ վերաբերվելու հերիք է ինչքան մեզ գործիք դարձրին կամ մենք կեղծաւորեցինք. պէտք է մեզ ունենալ խնայողական արկղը, մեր վրայից կեղտը սրբելու համար:

Մենք կարծում ենք, որ մեր չը խնայելու պատճառները մէկն էլ այն է, որ մեր աչքին հոտարակ բան է թոււում ամսական 4—5 ռուբլի խնայելը. բայց մենք ի նկատի չունենալով որ ամսական 4—5 ռուբլի տնտեսելով տարվայ մէջ տնտեսած կը լինենք 50—60 ռուբլի, իսկ 5—6 տարուց յետոյ հարկւորներ կը դառնայ, ուստի և այս ողորմելի դրութեան մէջ ենք գտնվում: «Արհամարհել թիչը, նշանակում է շատն էլ արհամարհել», ասում են բոլոր գիտութիւնները, և ճշմարիտ, քիչից է շատը կազմվում. եթէ մենք թիչը քիչ վրա չը դնենք, շատ ստանալ չենք կարող: Մենք հո չաւ գիտենք, որ դետերն անձրի կաթիլներէն են գոյացած, էլ որ օրվայ համար ենք պահում մեր խնդը, եթէ այսպիսի

դէպքում նա մեզ օգնութեան չը պիտի հասնի: Գործակաւորները, բանուորներն ու արհեստաւորներն աշխատում են իրանց ապագան բարուրելու—ապա մենք չը պիտի աչք մտնին մտածենք: Լաւ է ոչ քան երբէք, ասում է առածը, ուրեմն խօսքից գործին դառնանք, միանանք բոլոր ուսուցիչներն և ձեռք դարկենք խնայողական արկղի հաստատութեան, այս պատիւ էլ կը բերի մեզ...:

Ուսուցիչ

ԲԱՐՈՒԻ ՀԱՅ ԲՈՂՈՒՔԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂԱՐԱՐՁԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կիրակի, ամսիս 4-ին, կայացաւ բողոքական հայերի ժողովարանում ընդհանուր ժողով, որի նպատակն էր ընտրել եկեղեցական ու դպրոցական գործերի համար մի հոգաբարձութիւն: Կէսօրից յետոյ, երբ բարոյը վերջացաւ, ժողովուրդը նստած անհամբեր սպասում էր... Ինչ բանին էր նա անհամբեր սպասում... Մտածել չը սկսող ամբողջ անհամբեր սպասում էր, որ մի կերպ վերջացնէ ժողովը և շտապէ դէպի տուն: Միայն համբերութեամբ սպասում էր երկրասարդների այն փոքրիկ խումբը, որը միանգամ ընդ միշտ վճռել է ըստ չափու կարողութեան ընդգլխանալ նոր սերունդը փոխենցող երգուհալ գործակալներին... Վերջապէս հոգաբարձապետը տեղից վերկենալով առաջ անցաւ և նրան հետեցին իր պաշտօնակիցները:

«Այսօր դուք հաւաքվել էք ընտրութիւն անելու,—սկսեց հոգաբարձապետը շամախեցոյց սովորական բարբառով, որը ես գրականական եմ իրաւունք ունի ձայն տալու, բայց եթէ կամենաք, կարող էք ձայնաւորութիւն չանել, այլ ուղղակի ոտքի կանգնել ու ասել թէ «մենք դարձեալ նոյն մարդկանց ենք ուզում»: Ժողովուրդը լուռ է... Հոգաբարձապետը շարունակում է. «Ինչպէս էք լուռ մնացել, կարող էք օտքի կանգնել և ասել թէ դարձեալ նոյն մարդկանք լինեն»: Ժողովուրդը շարունակում է լուռ մնալ... Հոգաբարձութիւնը սկսում են դիմաշարժութիւններով անբաւականութիւն արտայայտել... Կրկին բարձրանում է հոգաբարձապետը և ժողովրդին իր գերիները երևակայելով, բացականչում է. «Ես ձեզ նման երկաւորապէս և անհասկացող ժողովուրդ չեմ տեսել ամբողջ աշխարհում. մենք ձեզ համար կհանք ենք դնում, ինն տարի գործում ենք, ոչ մի աշխատանք չենք խնայում, բայց այսօր ձեզանից ոչ մէկը չունի, որ օտքի կանգնէ և շարունակաւորութիւն անէ մեզ: Ուստի ես իմ կողմից շարունակալ եմ լինում մեր հոգաբարձութեան գանձապահից, որովհետեւ նա շատ չափազանց է աշխատում (միթէ...)»:

Ժողովուրդը դարձեալ լուռ է... Եւ հաճախ հոգաբարձութիւնը բեմի վրա կանգնած լինելին, կը կարծէր, թէ տաղանդաւոր դերասանները խաղում են Մոլիերի կատակերգութիւններից մի ամենաժողովարար... Բայց թողնենք այդ... Այստեղ ինքն ըստ ինքեան հաւց է ծագում, թէ արդեօք ինչ է գործել մեր հոգաբարձութիւնը, որ հրամայում է ժողովրդին ոտքի կանգնել և շարունակաւորութիւն անտեսանելի (զուցէ պատկերէ...)... Սրանց գործունեութիւնը նախ և առաջ երևում է տարեկան հաշիւից: Հաշիւը ցոյց է տալիս, որ մի տարվայ ընթացքում եկեղեցին դպրոցի հետ միասին մուտք է ունեցել մօտ 1400 ռուբլի, ծախք մօտ 1700 ռուբլի, ուրեմն մօտ 300 ռուբլի գնփոխել է ունեցել: Յիշեալ գումարից 720 ռուբլի վճարված է (այսինքն ընծայված է) ընդգլխանալ, որի ամբողջ ընդգլխանալը և մասկաւարութիւնը միասին հինգ կոպէկ չարժեն: Մնացածն էլ վճարված է վարձուհուն,

ծառային և այլն... Այժմ մի քանի նմուշներ կը բերեմ հոգաբարձութեան հոգաբարձութեան գործունեութիւնից:

1) Անդադար հալածելով լուսամտի և ստորանալու ցանկութիւն չունեցող երկրասարդներին, զգուցեցրել է և համայնքից հեռացրել:

2) Գանձարանի մուտքը տարուց տարի պակասեցնում է: Օրինակ Ն. Մարտիրոսեանց, որը իր ընտանիքի և մօտաւորների անունով նպաստ էր տալիս ընկերութեան 200 ռուբլի տարեկան, այժմ մի կոպէկ էլ չէ տալիս, իրաւացի պատճառ բերելով որ հոգաբարձութիւնը ոչ չէ դարձնում դպրոցի գրութեան վրա... Եւ հաճախ իրաւաբանչիւր տարի դեֆիցիտ է յայտնվում, այնպէս որ եկեղեցու ունեցած ընդամենը երկու հատ խաղարկական տոմսակները դրաւ են զրկւած և փողը ծախսված, և ոչ մի յայտ չը կայ, թէ երբ և իցէ կազատվեն բանտարկված տոմսակները...

3) Մի ժամանակ տեղի էին ունենում իւրաքանչիւր ամսի առաջին կիրակի օրը ընդհանուր խորհուրդներ, ուր ամեն մի երկրասարդ միջոց էր ունենում իր մտքերը արտայայտելու: Հոգաբարձութիւնը վնասակար համարելով այդպիսի զովի սովորութիւնը, վերացրեց նրան: Այնպէս որ այժմ տարի գալիս է, տարին դնում, բայց երբէք խորհուրդ չէ լինում:

4) Դպրոցը պահվում է այնպիսի դրութեան մէջ, որ մասնակ սերունդը փչանում է ֆիզիկապէս, մտաւորապէս և բարոյապէս: Եւ ինչու չեն բողոքում... Որովհետեւ տեսնուր հոգաբարձապետի ջրով օրդին է և ժողովուրդը վախենում է...:

Այդ հոգաբարձութեան մասին ամփոփ գաղափար ապառ հպմար ինքու նկատողութիւն անեմ շատ ժամանակ ընդհատեց իր խօսքը: Երբորդը իւրաքանչիւր շաբաթի ինն օրը հիւանդ է լինում, իսկ չորրորդը միշտ զանգաւորվում է, որ ինքը չէ կարող հոգաբարձութեան լինել, բայց ընկերները ստիպմամբ քարշ են տալիս: Ահա թէ ովքեր էին բարկացել, որ ժողովուրդը ոտքի չէ կանգնում և շարունակաւորութիւն չէ յայտնում: Երևի պարոնների հակադրողութեամբ շարունակաւորութիւն յայտնելը խաղալիք է: Բայց դառնա՞նք դէպի ժողովը:

Հոգաբարձութիւնը տեսնելով, որ ժողովը ոտքի չէ կանգնում և չէ ասում, թէ «մենք ձեզ և ուզում», ընդհակառակը, երկրասարդները պահանջում են որ անպատճառ գաղտնի ընտրութիւն լինի, ստիպված թողնել բաժանեց: Եւ հաճախ հոգաբարձութեան երկուսը, ընտրութիւնից վախենալով, բաց է ի բաց հրաժարվում են: Երբորդն ասում է թէ «ես ամբողջ տարին հիւանդ եմ լինում, բայց եթէ Տէրը ընտրէ, դարձեալ կը մնամ որպէս հոգաբարձութեան: Ամբողջ տարին հիւանդ հոգաբարձութեան... սքանչելի գործիչ կը լինի... Իսկ չորրորդը բարկանում է, թէ ինչու հրաժարվեցան իր երկու ընկերները: Խօսակցութիւնը աղմկալի է դառնում: Վերջապէս մի երկրասարդը առաջարկում է հետեւեալը. «Երկու հոգաբարձութեան հաստատ հրաժարվում են, մենք էլ ընդունում ենք նրանց հրաժարականը, ուրեմն սկսենք հիմա զրել, և հրաժարվածներին եթէ զըրող լինի, չենք հաշի նրանց ձայնը»: Ընդունվեց երկրասարդի առաջարկութիւնը: Այսպիսի ընտրութիւն կուլիւնը, բայց ինչ երևելի ընտրութիւն... Հոգաբարձապետը նստել է սեղանի մօտ և հրամայում է թղթերին իր մօտ բերել: Ահա մի պատահի բերում է մի թղթ, որը գրել էր յետևում է. «նստած մի ծերուն: «Այս ժամ վաղ է, բացականչում է հոգաբարձապետը, մտածում կարդալով գրած անունները—«Թուոմա Խալպար, սա դու ես գրել»: «Այո» պատասխանում է «Թուոմա Խալպարը» ժողողալով: Վախկոտ բողոքականները տեսնում են, որ «Թուոմա Խալպար» գրուածը իմացվեց, իրանք զգուշանում են հոգաբարձապետին անհանդ առնունքը գրել: Արդեօք, ինչ իրաւունքով էր հոգաբարձապետը կարողում գրած

Երբ օպերային երգիչները երեք հոգի՝ արևիկյան սի, պապ. Տարապիտի և Վանդերբիլի, փետրվար 15-ին կոմկասեան սարերի ճանապարհով, Լորվեցան զեպի Պեանբուրգ, որտեղ նրանք Էրիվադ են մի քանի շաբաթով Պանանելի նաւոր Խապական օպերայում երգելու հա-

յայտնի էին իրենց, և նոյն իսկ շատ թիւրքեր և քրիստոնյաներ, փոքր ի շատ արագամիտ ուղիւներն ապականողները:

— Գործից «Հիւսիսային դործակալութիւնը» հետեւում է փետրվարի 8-ից մարտի 1-ը լրացնելուն: Որպէս զի Մուսա-բէյի դէմ նորից դատ նկատ գնացում նոր պիւնդալներ չը պատահին, սովորաբար հրամայել է, որ դատարանութիւնը իր անձնական հսկողութեան ներքո կատարվի, ինչից-Քիտընդուն:

— Բերլինում լուրեր են պտտվում, որ իշխան Բիւմարի պէտք է հրաժարական տալ Այդ լուրը կիսապատմական լրագրողների մէջ ևս սարգել է: Իբրև նրա յայտնի խօսում են Բիւտիլների մասին:

— Մակեդոնիայում մեծ յուզումներ կայ:

— Կրեմլի վրա սաստկանում է ժողովրդական շարժումը:

— Յայտնի է, որ անգլիական պարլամենտում կայ մի փոքրիկ կուսակցութիւն, որը աշխատում է Շոտլանդիային ինքնավարութիւն տալու մասին: Թէև այդ կուսակցութիւնը շատ փոքր է, բայց նա գոյութիւն ունի, և ինչպէս երևում է վերջին լուրերից, մօտիկ ապագայում անգլի կը դորանայ և զուցէ յոյս էլ ունենայ իր ծրագրեր իրագործման աշխուժման վրա:

— Բերլինից գրում են, որ Գերմանիայի զանազան դործարանատէրեր և հանքատէրեր մտադրութիւն ունեն ընդհանուր ոյժով զիմարելը բանւորների նորոնք պահանջներին, ինչէ բանւորները այդպիսի պահանջներ կանեն, որոնք ինքն իրենք պահանջում են իրենց իրաւունքները:

— Վիեննայից գրում են, որ Աւստրիայում շարժումներ են նկատվում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐՈՒԳ, 14 փետրվարի «Гражданин» լրագիրը հաղորդում է, որ ժողովրդական լուսաւորութեան միջնորդը չըջարեալականով անգլիկացիք է ուսուցանողական շրջանների հոգաբարձուներին կարգադրել, որպէս զի թաղաւորի համար աղօթքը բոլոր դպրոցներում ուսուցիչն ասվի: Օտար դաւանութիւնների համար բացառութիւն թոյլ է տրվում միայն առանձին դէպքերում, տեղական պայմաններին նայելով, ներքին գործերի և ժողովրդական լուսաւորութեան միջնորդների համաձայնութեամբ: Եւթի Պետերբուրգ հասաւ կովկասեան կառավարչապետ իշխան Գոնչուկով-Կորսակով:

ԲՈՒԴԱՊԵՏ, 14 փետրվարի Պատգամաւորների ժողովում զիմարեալականները շարունակում են խառնակութիւնները: Աբրահիմ ասեց. «Տիւսա այնպիսի կաշի ունի, որը անընդունակ է կարմրելու»: Նախագահ Պեչի նկատեց որ այդ տեսակ նախադասութիւնները անվայել են: Այդ նկատողութիւնը անգլիկ աղմուկ առաջ բերեց, զիմարեալականները սպառնում էին նախագահին բռնուցանելով: Ուղղուն գոռաց. «Մենք անկարգութիւններ կանենք մինչև որ Տիւսա հրաժարական կը տալ: Այդպիսի ուղարկեց նախագահին մօտ իր սեկրետարներին, բայց բացատրութիւնները յետոյ, մենամարտը տեղի չունեցաւ:

ԲՈՒԴԱՊԵՏ, 14 փետրվարի Բելգիական կառավարութիւնը պատասխանելով Բերլինի կոնֆերենցիային մասնակցելու հրաւերին, յայտնել է, որ ինքը ընդունում է այդ հրաւերը մեծ պատրաստակամութեամբ և յարգանքով է վերաբերվում դէպի կայսրի մեծանովի մատուցութիւնները: Բելգիական կառավարութիւնը յարակցում է, որ ինչի վրան հաղորդվում լինէր կոնֆերենցիայի ծրագրերը, այդ ժամանակ դուցէ ինքն որ և է պարզաբանութիւններ անէր, մասնաւոր այն պէտքերի մասին, որոնք առաջ են գալիս զանազան երկիրների օրէնսդրութիւնները և աշխատանքի պայմանները տարբերութիւնից, այլ և աշխատանքի միջազգային պայմաններից, մաքրապիս հարցի վերաբերմամբ: Բելգիական սենատում վան-Պուտ պահանջեց կառավարութիւնից, որ Բերլինի կոնֆերենցիայի ժամանակ կառավարութիւնը առաջարկութիւն անէր ընդհանուր գիտնականութեան մասին Այդ պահանջը առաջ

բերեց համալրական ցուցիչ սենատի բոլոր ներտարաններին:

ՊԱՐԻՑ, 14 փետրվարի ժողովը հապտուեց ներքին կանոնադրութեան շտաբի ղեկավարները, որոնք չհարկով արանց չեալ կարելի կը լինի 30 նիստին մասնակցելուց հետո: Բայց ժողովի այն պատգամաւորները, որը կը հրաժարվի ենթարկվելու նախագահի կարգադրութիւններին: Գերուէն ըստեց այդ միջոցի դէմ, համարելով նրան երկարալիւն և նենգաւոր գեղծում մեծամասնութիւն կողմից:

ՊԵՏԵՐՈՒԳ, 15 փետրվարի: Թալատրվում է հետեւեալ զիւղատնտեսական ընկերութիւններին կազմելու ցուցահանդէսներ այս տարւոյ ընթացքում: Կայսերական այգեգործական ուսուցչական ընկերութեան, համառուական ցուցահանդէս այգեգործութեան, պտուղների և սերմերի ցուցահանդէս, սեպտեմբերի վերջերին, Պետերբուրգում: հարաւարեւելեան Ռուսաստանի զիւղատնտեսական ընկերութիւն, զիւղատնտեսական ցուցահանդէս տնայնագործութեան բաժնովի Պենզայում, Պենզայի և Սարատովի նահանգների համար: Բորիսոգլեբսկի զիւղատնտեսների ընկերութեան, զիւղատնտեսական և տնայնագործական-արդիւնաբերական ցուցահանդէս Բորիսոգլեբսկի մէջ, սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 20-ը: Կիւմի զիւղատնտեսական ընկերութեան, թուղաների, խոզերի և ոչխարների ցուցահանդէս Կիւմում, օգոստոս ամսին: Ֆելինի զիւղատնտեսական ընկերութեան, կանաչի և սերմերի ցուցահանդէս Ֆելինում, փետրվար ամսին, և Կուրլանդիայի զիւղատնտեսական ընկերութեան, Տուկուսի ընկերութեան հետ միասին զիւղատնտեսական ցուցահանդէս՝ Տուկուսի մէջ, յուլիսի 14-ից մինչև 17-ը: Դրա հետ միասին միջնորդութիւնը նշանակել է մեղաներ և զովասանական թերթիւր: «Пет. Вѣд.» լրագրել լսել է, որ պետական խորհրդին ներկայացրած է մի առաջադրութիւն Տալիկան նահանգի Կալուշի կառուինը քաղաքային ինքնավարութիւն տալու մասին, իբրև առևտրական մի կարևոր տեղի և իբրև բանւորական կենտրոն:

ԲՈՒԴԱՊԵՏ, 15 փետրվարի: Սենատի նիստում արտաքին գործերի միջնորդը յայտնեց, որ նա չէ ընդունում վան-Պուտի առաջարկը: Ընդհանուր զինավաճառի մասին հարց յարուցանելու վերաբերմամբ:

ԿՊԵՆՀԱԳԵՆ, 15 փետրվարի: Բերլինից ստացած պաշտօնական տեղեկութիւններին նայելով, իշխան Բիւմարի, ի նկատի ունենալով ընտրութիւնների վախճանը, յետաձգեց այն հարցի վերաբեր թէ հարկաւոր է արդեօք հրաժարվել պրուսական միջնորդ-նախագահի և պետական կանցլերի պաշտօններից:

ՏԵՂԵԿԱՑՈՑՑ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ

Փաստային գնացքը ուղևորվում է

ԹԻՖԼԻՍԻՑ գնացի Բաթում . . . 9 ժ. 3 ր. առաւ:
ԲԱԹՈՒՄԻՑ գնացի է Թիֆլիս . . . 10 > 58 > երեկ:
ԹԻՖԼԻՍԻՑ գնացի Բաթում . . . 8 > 13 > երեկ:
ԲԱԹՈՒՄԻՑ գնացի է Թիֆլիս . . . 7 > 57 > առաւ:

Ապրանքա-ճանապարհորդական գնացքը
ԹԻՖԼԻՍԻՑ գնացի Բաթում . . . 1 ժ. 54 ր. ցերեկ:
ԲԱԹՈՒՄԻՑ գնացի է Թիֆլիս . . . 8 > 20 > առաւ:
ԹԻՖԼԻՍԻՑ գնացի Գանձակ . . . 8 > 35 > առաւ:
ԳԱՆՁԱԿԻՑ գնացի է Թիֆլիս . . . 8 > 44 > երեկ:

ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՂԵՆԱԻՐ
Չմեռնային երթևեկութիւն

ՀԻՆԴԱՍԹՈՒ օրերը, երեկոյան 4 ժամին, չորհրդաւ Բաթումից ուղևորվում է Օղէտա, Նովորոսիյսկի վրայով:

ՇԱՐԱՐ օրերը, երեկոյան 8 ժամին, չըջական Բաթում, Բուր Նուաճանգիտների վրայով:

ՉՈՐԻՔՇԱՐԹ օրերը, երեկոյան, արտասահմանեան Բաթում, գնացի Կ. Պոլսի:

ԵՐԵՎԱՆԹ օրերը, Օղէտայից չըջական Բաթում կից չորհրդաւ հասնում է Բաթում մօտ կէս զիւրեկին:

ՌԻՐԱՐԹ օրերը, Օղէտայից ուղղակի Բաթում և կից չորհրդաւ հասնում է Բաթում, առաւօտեան:

ԵՐԵՎԱՆԹ օրերը, առաւօտեան, հասնում է Բաթում Կ. Պոլսից եկող չորհրդաւ:

Իւրազիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄՈՒՆԻ

ՅԱՆՈՒՑՈՒՄՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵՆՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀԱՌԻՐ պատիւ ունի ծանուցանել իր գիտութիւն ընկերութեան Թարգելի Անգամներին, թէ այս փետրվարի 18-ին, կիրակի, առաւօտեան 11 ժամին, Թիֆլիսի Գաղաքային Խորհրդի դահլիճում նշանակուած է ընկերութեան Ընդհանուր Ժողովը, որի պարագային նիւթ լինելու է—

Ա. Բնորոշումը՝
1) Ընդհանուր Ժողովի համար Նախագահ և Գարաուդար այս 1890 թուականի համար
2) Խորհրդի համար վեց անգամ և հինգ փոխանդամ:

Եւստի օրէնքի իրանց պաշտօնավարութեան ժամանակը լրացել են անդամը Խորհրդի պատգամաւոր Մանթաշեան, Ալեքսանդր Մելք-Ազարեան, Ներսէս Աթաբեկեան և Բժ. Գրիգորիան: Տէր-Գրիգորեանց, իսկ արգելաւիժ պատճառներով հրաժարուած են պատգամաւոր Եսայեան և Ստեփաննոս Զինկալի: Խորհրդի միակ փոխանդամը, որ նոյնպէս լրացրած է իր միամեայ պաշտօնը, է պ. Նիկողայոս Տէր-Ղևոնդեան:

3) Ընկերութեան 1889-ի Գրաւական կրկնաւորի հաշիւները ընկելու համար վերածնունդ Գանձաւորի երեք անգամ:

Բ. Ընկերութեան այս 1890 թուականի Ընդհանուր (Խորհրդի և Տէր. վարչութիւններ) ՆԱԽԱՀԱՇՈՒԻ ընտրութիւնը և հաստատութիւնը:

Ընկերութեան անդամակցել ցանկացողները կարող են դիմել պարոն Եփրեմ Մատթեոսեան, որոնք լամպի մագաղինում Վոլոցովայա փողոցի վրա: Իսկ և Ընդհանուր Ժողովի օրը Գաղաքային Խորհրդի դահլիճում Ընկերութեան Խորհրդի քարտուղար պարոն Աւետիք Եղեկեանին:

3—3

ТИПОГРАФИЯ восточных и европейских языковъ книгопродавца А. М. Мургуси АКОПОВА въ ШУШАХЪ

ՏՊԱՐԱՆԱՅԵՐ Մահաւի Թաղաւորայի յայտնում է, որ նա բացել է ՇՈՒՇՈՒԻ տեղեկութիւնների հաշուառու (справочная контора) որով կատարում է քաղաքային, վաճառականական և ուրիշ ամեն տեսակ յանձնարարութիւններ: Օտարաբար քաղաքացի կարող են դիմել հետեւեալ հասցեով ՍՄՍԱ. Справочная контора Мургуси АКОПОВА.

1—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 28 փետրվարի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ «ERIDAN» (ԷՐԻԴԱՆ) շոգ նաւը նաւապետ NEGRE (ՆԵԳՐ), դէպի Կ. Պոլս, Մարսէյ, Հաւր և ԼՕՆԴՈՆ, մտնելու միջանկեալ նաւահանգիստները:

Աղէնաները՝ ԲԱԹՈՒՄԻՍՄ պ. Գ. ԷՍՍԵՆՅԵՐԻ, ԹԻՖԼԻՍԻՍՄ ԳԵՐԳ. ՀԵՅՈՒԹԵԱՆ ՀԵՅՈՒԹԵԱՆ, իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ ԳՕԼԴԻՈՒՍԻ:

1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Չորեքշաբթի, փետրվարի 28-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÉNIE) շոգ նաւը, նաւապետ ԳԱՐԻԳ. (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն Կ. Պոլս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին: Բաթումում տան, Նաբեբէժնայում, և Թիֆլիսում նախկին Արժուճ գալլերէում, № 114.

1—2

Սեանի վանքում նորակազմ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻՆ գրքեր, զրամական նպատակ և ներքին ուղարկել ցանկացողներին խնարհաբար խնդրում ենք դիմել այս հասցեով Ստ. Еленовца. Զր. гуд. Архимандриту Вагану Кевожанцъ.

5—5

Մ. Գ. ՑԷՅՏԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՑՆԵՐԻ ՄԱԳԱՂԻՆ

ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պալատի այգու դիմաց, անկենի մագաղինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոսկեայ, նիկեայ, պողպատեայ և կրկայ ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԵՆՏԵՆԵՐ և ԼՕՐԵՆՏԵՆԻ: Թաղաւորական և քաղաքային ԲԻՆՈՎԵՐ, ԶԵՐՄԱՍՏԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վանանների համար վերաբաւեւում և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ շերմաչափեր: Լօրնկտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետաղական թելեր:

Անոցների և պէնսնէների արվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մագաղինում յանձն են առնում նմանապէս փափած իրերի նորոգել և ապաղինների դնել:

ԳԵՆԵՐԸ ամենաշափաւոր են:

4—50 (2)

Անհրաժեշտ եմ համարում հրապարակու յայտնել ի գիտութիւն մեր ԿՈՎԿԱՍ պատուելի ՀԱՅ ՎԱՅՈՒԱԿԱՆՆԵՐԻ, որ ես վերջին ժամանակներս ՄՕՍԿԱՍԻՑ տեղ փոխվել եմ ՎԱՐՇԱՎԱ, և դարձեալ ընդունում եմ ամեն տեսակ յանձնարարութիւններ, մասնաւորապէս ԿԱՇՈՒԻՐՈՐ լինելով առնում եմ և ուղարկում եմ մի յարգելի վաճառականներին, ամեն տեսակ ԿԱՇՈՒԻՐԷՆ և դրա վերաբերեալ ապրանքներ: Ծանօթ եմ նոյնպէս զայնատեղիական և ուրիշ ապրանքների հետ Մ հասցէն. ВАРШАВА, Товмасы ЯРГУЛЯНЦЪ. Перебздъ, домъ № 3.

13—20 (Կ. շ.)